ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «04» հունվարի 2023 թ.

ՀՐԱՄԱՆ N 2-Ղ

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՀԱՅՏԱՏՈՒ՝ ԱՐՏԱԿ ՌԱԶՄԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Կադաստրի կոմիտեի 2022 թվականի դեկտեմբերի 19-ին կայացած ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական որակավորման քննության (այսուհետ՝ Որակավորում) ընթացքում առաջադրված հարցերում առկա սխալների հիմքով հայտատու Արտակ Ռազմիկի Սարգսյանի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 21-ին ներկայացված N Մ-35959-2022 դիմում-բողոքը և բողոքի հիման վրա Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 5-Լ կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 1 արձանագրությամբ տրված եզրկացությունը՝

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն որոշման հավելվածով հաստատված «Գնահատման որակավորման քննությունների անցկացման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի պահանջների համաձայն՝ Որակավորման քննության արդյունքները հայտատուները կարող են գրավոր բողոքարկել հանձնաժողովին՝ առաջադրանքի որևէ հարցադրման կամ դրա պատասխանի ճշտության մասով, որակավորման ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում: Բողոքի հիման վրա հանձնաժողովն արձանագրային որոշմամբ մերժում է բողոքը կամ բավարարում՝ սույն կարգի 36-րդ կետում նշված միավորները (առնվազն 120) հավաքելու դեպքում հայտատուին համարելով որակավորման քննությունը հաղթահարած:

Միաժամանակ Կարգի 46-րդ և 47-րդ կետի պահանջների համաձայն՝ գրավոր բողոքը քննության է առնում այն կոմիտեում մուտքագրվելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ կոմիտեի ղեկավարի համապատասխան

կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից (այսուհետ՝ աշխատանքային խումբ), որի կազմում կարող են ընդգրկվել նաև գնահատողի գործող որակավորման վկայական ունեցող անձինք: Հայտատուի չներկայանալն աշխատանքային խմբի նիստին չի խոչընդոտում աշխատանքային խմբին՝ եզրակացություն տալուն:

Բողոքարկման արդյունքում կոմիտեի ղեկավարը, աշխատանքային խմբի եզրակացության հիման վրա, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքն անփոփոխ թողնելու մասին.

2) հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքը փոփոխելու վերաբերյալ.

3) բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ժամկետներով երկարաձգելու մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերից է՝ անձի դիմումը, բողոքը:

Օրենքի 19-րդ հոդվածի և 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Ըստ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 1 արձանագրության հայտատու Արտակ Ռազմիկի Սարգսյանը՝ 2022 թվականի դեկտեմբերի 19-ի որակավորման քննության արդյունքները հրապարակվելուց հետո, բողոքարկել է իր կողմից լրացված հարցաշարի պատասխանները:

Աշխատանքային խմբի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 53-րդ հարցում առկա է վրիպակ՝ «վերարտադրման արժեքը» բառերը պետք է փոխարինել «վերարտադրման ծախսերը» բառերով, ուստի հարցաշարի 53-րդ հարցի համար ավելացվել է 2 միավոր, իսկ 44-րդ հարցը թողնվել է անփոփոխ:

Ուսումնասիրության արդյունքում հայտատուի հավաքած 119 միավորին ավելացվել է 2 միավոր և եզրակացությամբ հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքը՝ 119 միավորը փոփոխվել է դառնալով 121, որը բավարար է գնահատողի որակավորման վկայական տրամադրելու համար, քանի որ Կարգի 36-րդ կետի համաձայն՝ հայտատուն համարվում է որակավորումն անցած որակավորման քննության առաջադրանքից առնվազն 120 միավոր ստանալու դեպքում:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն որոշման հավելվածով հաստատված «Գնահատման որակավորման քննությունների անցկացման կարգ»-ի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 5-Լ կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 1 արձանագրությամբ տրված եզրկացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական որակավորման քննության 2022 թվականի դեկտեմբերի 19-ի հայտատու՝ Արտակ Ռազմիկի Սարգսյանի որակավորման ստուգման արդյունքը փոփոխել և տրամադրել գնահատման գործունեության որակավորման վկայական:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով:

04.01.2023

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393